ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/246

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13703-2021 գրությամբ «Վալսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարություն 20.08.2021թ. թիվ ՊՆ//4356-2021 գրության հիման վրա, 26.08.2021թ. թիվ 26/26-1/13703-2021 գրությամբ նախաձեռնել է «Վալսա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վալսա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վալսա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-202/246 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:30-ին և 06.09.2021թ. 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 20.08.2021թ. թիվ ՊՆ//4356-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վալսա» ՍՊ ընկերության միջև 26.05.2021թ.-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-21-3/4-1 գնման պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, ամփոփելով նշված պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու արդյունքում առաջացող տույժերի և տուժանքների վերաբերյալ տվյալները, 2021 թվականի օգոստոսի 18-ի դրությամբ ամբողջությամբ միակողմանի լուծել է վերը նշված պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագիրը ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը 18.08.2021թ.-ին հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում և միաժամանակ ուղարկվել է «Վալսա» ՍՊ ընկերության էլեկտրոնային փոստին:

Կից ներկայացվում են վերը նշված կազմակերպության վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/246 ընթացակարգի շրջանակներում 01.09.2021թ. ժամը 09:30-ին և 06.09.2021թ. 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/246 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/246 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը և «Վալսա» ՍՊԸ-ի միջև 26.05.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-3/4-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 400 հատ ռադիոընդունիչ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. 2-րդ եռամսյակը:

3. Պատվիրատուն «Վալսա» ՍՊԸ-ին ուղղված 18.08.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը և «Վալսա» ՍՊԸ-ի միջև 26.05.2021թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/4-1» գնման պայմանագրի համաձայն՝ «Վալսա» ՍՊԸ-ն պարտավորվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 400 հատ ռադիոընդունիչ, սակայն վերջինիս կողմից նշված ապրանքները չեն մատակարարվել:

Հաշվի առնելով վերը նշված ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.08.2021թ. ամբողջությամբ միակողմանի լուծում է Պայմանագիրը»:

5. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 18.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13703-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարություն 20.08.2021թ. թիվ ՊՆ//4356-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված

բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարությունը և «Վալսա» ՍՊԸ-ի միջև 26.05.2021թ. կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-21-3/4-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 400 հատ ռադիոընդունիչ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել 2021թ. 2-րդ եռամսյակը:

Պատվիրատուն «Վալսա» ՍՊԸ-ին ուղղված 18.08.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը և «Վալսա» ՍՊԸ-ի միջև 26.05.2021թ.-ին կնքված «ԳՀԱՊՁԲ-21-3/4-1» գնման պայմանագրի համաձայն՝ «Վալսա» ՍՊԸ-ն պարտավորվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը 2021թ. 2-րդ եռամսյակի ընթացքում մատակարարել 400 հատ ռադիոընդունիչ, սակայն վերջինիս կողմից նշված ապրանքները չեն մատակարարվել:

Հաշվի առնելով վերը նշված ապրանքների չմատակարարման փաստը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը և 2.1.7.1 կետի բ) ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 18.08.2021թ. ամբողջությամբ միակողմանի լուծում է Պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 18.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ ուսումնասիրելով վերը նշված փաստերը՝ արձանագրում եմ, որ «Վալսա» ՍՊԸ-ն խախտել է իր և ՀՀ պաշտպանության նախարարության միջև 26.05.2021թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-21-3/4-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Վալսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.08.2021թ. թիվ 26/26-1/13703-2021 գրությամբ «Վալսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վալսա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**